

Է մեզ ֆարբարի քարոզները, որ ոչ դաւանական վէճերի, ոչ լետագէմ սովիետութիւնների, ոչ անցողական մտքերի մի շտեմարան է, այլ միշտ թարմ, միշտ վսեմ, միշտ կենդանարար գաղափարների, հաւատի, լուսոյ, սիրոյ, ճշմարտութեան, գթութեան և նման առաքինութեանց մի գիրք է, լուսաբանուած կեանքի բազմաթիւ պատկերներով։ Եւ ալդ գիրքը բնականաբար պիտի արհամարհուէր ևնոր տեսակի լառաջադիմականներով և Մանդինեանի մաքուր սէրը պիտի խաչուէր հին կիւների ատելութեամբ։

Ալժմ հասկանալի պիտի լինի ընթերցողի համար, թէ որպիսի վաստակներն են արհամարհում մեզնում և որպիսիները գնահատւում և որպիսի հոգի և սիրուունին մեր արդի քննադատները։

Մի թերութիւն, որ Ս. Մանդինեանն ունի, ալդնրա լեզուի մէջն է։ բառերի կազմութեան մէջ անհարթութիւններ և տարօրինակութիւններ են պատահում, բայց բառական պաշարը մի ճոխութիւն է ներկայացնում։ Եւ եթէ Մանդինեանի նախկին և նոր գըքերը համեմատելու լինինք, կտեսնենք, որ մեր իսկական լառաջադիմութեան լաջողակ մարտիկը շատ մշակել է և իւր լեզուն, որ միայն ինքնակըթութեան արդիւնքն է։

ՔՆՆԱԿԱՆ պատմովմիան Ժ.Ժ. Դարու հայ դպրութեան. գրեց Միջնան Յովհաննէսեան, հրատարակովմիան «Թանասէր»-ի, Պարիզ 1901 եւ նուիրուած Միսիթար արքահօր անհոստաց յիշատակին։

թէ

Ակա 10 գլխից բաղկացած գիրքը չունի լառաջաբան, որ

իւր նպատակը և իւր տպագրութեան կարնորութիւնը ցուց ասր, այլ սկսում է՝ «Ընդհանուր տեսութեամբ», որտեղ քաշաղրում է, թէ ինչպէս Ժ. դարի դպրութիւնը մանաւանդ սկզբում առաւել վանական է. եղել և չէ ուխուկունցնել, չնայելով որ մենք մեկենասներ և գրականութեան նպաստամատուց ընկերութիւններ ենք ունեցել և Սահակ-Մեսրոպեան մըցանակ ունինք: Է. «Արձակումն» (¹⁴) մամլոր գլխով հեղինակը երեւում է, որ ապագրութեան հոգեոր իշխանութիւնից արձակուիլը, աղատուիլը, տարածուիլը և զարգանալն է հասկանում, որտեղ մի քանի հետաքրքրական տեղեկութիւններ է հազորդում: Գ. «Ձեզծումն մամլոր» գլխում հեղինակը լարձակւում է անանուն հրատարակութեանց վրայ, թէս դէմ չէ կեղծանուն կամ ծածկանուն գործածելուն և ալս առթիւ մէկ էլ սկսում է Ա. Գ.քի տպագրութեանց պատմութիւնը, ապա ծածկանուան մասին իւր խորհրդածութիւններն անելով հեղինակը հրահիրում է իրբն իւր ասածների ապացուց թերթել շուրջ 150 անուն լրագիր և դարձեալ ճառում է ծածկանուան գործածութեանց պատճառների մասին և ալին: Ռ. «Լեզուական պալքար», բովանդակում է հին և նոր լեզուի կայլը, վերջինի լաղթանակը և երկմեղքումը Սալլանթեանցի նոր կտակարանի թարգմանութեամբ 1834 թուին, որով հիմք է զըրւում Արևելեան - աշխարհաբարին կամ Արարատեան բարբառին: «Լեզու», որտեղ խօսում է լեզուի զարգացման մասին, ալս առթիւ վիշտում են Ժ. դարու 15 բառարանները և Ն. դարից մինչև մեր ժամանակի քերականութիւններն, ուր տպագրութիւններն անգամ մոռացուած չեն: — Չ. «Նկարագիր Ժ. դարու հաւ դպրութեան» գլխում լիշտակւում են նախնեաց բոլոր ինքնագիր և թարգմանական գրուածքները: Այս առթիւ Աստուածաշնչի աշխարհաբառ թարգմանութեանց հետ կրկին լիշտում են Աստուածաշնչի և գրաբառ տպագրութիւնները: Նեշտում է, որ մեր գրականութիւնը առաւել թարգմանական է, բայց «Ժ. դարու հաւ դպրութեան նորիղնին վըրաբառ... մի քանի շողջողուն հանձո՞ւներ վալրկեան մը կը փալլինու: Բայց որովհետեւ պարզացման օրէնքը ախնակէս կը պահանջէ որ գրականութեան մէջ տաղաչափութիւնը միշտ կանխէ արձակը», ուստի չորս էջ 150-ի չափ անթիւ և անհամար բանա- ուժներ են վիտում սկսեալ Զամշեանից մինչև Յ. Թումա-

նեանց և ազա աւելացում է պ. հեղինակը. «Անհնարին բան
է հոս ամփոփել այլ բանաստեղծական հատորներ...ու է. Տա-
ղաչափութիւնը գլխում հեղինակը ճառում է տաղաչափութեան
ծագման բոլոր տեսակների մասին և ցոլց է տալիս հին և
նոր աղդերի տաղաչափութեան աղդեցութիւնը մերինի վրայ
շ. Անրձակի-ի տեղը որոշելով նորից գրաբառի և աշխարհա-
բառի և թարգմանութեանց խնդիրն է իեղեղուում և «Նոր գլո-
ցի աղդերէ»՝ պարսիկ, արաբ և թուրք-հեղինակներ թարգմանելը
ի. դարու պարտքն է համարում. Բայց այնուհետև «մենք ալ
օտար լեզուներու թարգմանուելու արծու հեղինակներ ունենա-
լու էինք. Բայց «ինչպէս» գրելու համար հարկաւոր է եղել
ճարտասանութեանց տրամաբանութեան ցանկը լառաջ բնրել.
Ապա լիշտատակում են դրականութեան բոլոր ճիշդերը—Ե.
«Հանդէս գրադիտաց ԺԹ դարու լիշտում են հալ, մանաւանդ
տաճկահալ բազմաթիւ հեղինակներ, ալս ցանկի միայն 116
երեսում հարց բախտառոր աղդը երէտ հանձու ունի, ա. ինք-
նաբոլս, բ. քերթողական, գ. բնատիզ. Ճ. «Ապագալ դրադի-
տութեան» մեր ալժմեան բանասիրութեան անտեսական տադ-
նապն և օտար կրթութեանց ծալրալեզ վտանգը նկատելով
հանդերձ՝ հեղինակը լուս ունի, «իրենցինին նախանձախնդիրն
«պիտի արտօնագրեն» ջլապինդ գրականութիւն մը. Խոկ գան-
քերու միաբանք... համաշխարհականք արժեք ունեցող զլուխ-
գործոցներ... Քսաներորդ դարու նշանաբանը պիտի ըլլալ ու-
րեմն զգուշանալ գրական ըջնկաւենէ.... Ուստի կեանքը մա-
հացնող դրական ճգանց մէջ ձդտինք դէպի անմահութիւն,
ինչպէս երեմն Միխթար Սեբաստացին»:

Անմահութեան ձգտմամբ կարելի է բացատրել այն հա-
մարձակութիւնը, որ գրքիս հեղինակը կամեցել է ԺԹ դարու
հայ դպրութեան և այն էլ գնակն պատմութիւնը 123 էջում
գրել և ամփոփել, ալս պատճառով էլ իւր զի՞րքը գրական մի-
ջակութիւն էլ չէ.

Որովհետեւ պարոնը նախ ծանօթ չէ իւր ընտրած ամ-
բողջ նիւթին. մի համառօտ ակնարկ անգամ ցոլց է տալիս,
որ նա առաւել Տաճկահալոց գրականութիւնը դիաէ. Մեր գը-
րագէտների ցանկում լիշտատակութեան չեն արժանացել ափործոի
և «Աղքադանք»-ի բեղմնաւոր խմբագիրը, «ր ալնքան զարկ է
տուել ռուսական գրականութեան, չկաէ մեր նշանաւոր ոճա-

քան և տաղանդաւոր վիպագիր Մուրացանը, պատմաբան Երիցեանը, մոռացուած են նաև մեր լալտնի մանկավարժ Սեղբակ Մանդինեան, հալագէտ կ. կոստանեան, թարգմանիչ Փիլիպպո Վարդանեան, չկան լրագրերի խմբագիրները իւրեանց գլխաւոր աշխատակիցներով և ալլն և ալլն, այնտեղ, ուր մանր-մունք դասագրքեր անդամ իւրեանց հեղինակներով լիշտակւում են:

Ապա հեղինակը չէ մշակել իւր նիւթը. ալսպիսի մի ընդարձակ նիւթ 123 էջում ամփոփելու համար կարող էին բազմաթիւ, երբեմն անկապ ցանկեր ճարտասանութեանց, քերականութեանց, Ա. Դրքի ապագրութեան, լրագրերի և հեղինակների գուրս ընկնել մի քանի խօսքերով և կամ ի մի ձուլուիլ. այն ժամանակ մեր վիպագիր Պոօշեանը հաւասար չափով լուրերուն չէր դառնալ, վասն դի նա ալդ ճիւղում աննշան է և մեր լալտնի դերասան պ. Զմշկեանը չէր դառնալ կատակերգակ հեղինակ.

Համաշափութիւն ասած բանը չկալ արս գրքում, մարդ չէ հասկանում, թէ ինչո՞ւ Աստուածաշնչի տպագրական սիմալներն անգամ, ներսէս Վարժապետեանի, Եղիա Տեմիրջիբաշեանին դրած մի էջ նամակը տպուած է ալդքան գուրգուրանքով, իսկ գրական մէկ ամբողջ ճիւղ ալդքան տեղ էլ չէ բռնում, կամ ալլ հեղինակների մասին միայն մէկ երկու բառով է անցնում.

Ի հարկէ մենք հեղինակից գոհ ենք և իւր տուածով և ամեն ընթերցող, չենք կամկածում որ մի քանի նոր ծանօթութիւններ և հարկաւոր զիտելիքներ կ'ստանալ, Բալց հեղինակի նպատակն ալդ չէ. նա կամեցել է մի դարու հայ զպրութեան ճնակոն պատմութիւնը տալ մեզ, Բալց ալդ հնարաւոր է ալժմեան վիճակում. երբ կենտրոններ չկան, որտեղ գոնէ մեր զպրութեան արդիւնքներն ամփոփուած լինէին, եթէ հեղինակը զպրութիւն հին բառը հասկանում է գրականութիւնը իւր լրութեամբ, այն բոլորն, ինչ որ հալ միտքն երկնել է, արտադրել է, այն ժամանակ ոչինչ չունինք ասելու դրքիս խորագրի մասին. բալց Զ. գլխից երեսում է, որ ալդ բառը գրականութեան, գեղեցիկ դպրութեան կամ գրականութեան իմաստով է, գործածուում, այն ժամանակ ոչինչ չպէտք է ունենան դրամագէտներ, բժիշկներ, բառարաններ և ալլն, նոյն իսկ գրականութեան պատմութիւնն իբրև

գեղեցիկ դպրութիւն, որ աւելի սահմանափակ կը լինէր, ալժմ մեղանում գրելը, եթէ շասենք անհնարին, պէտք է պնդենք, որ շատ զծուար է, երբ դեռ չկան մնանում մենագրութիւններ, մասնաւոր ուսումնասիրութիւններ և շատ անզամ կենսագրական և ալլ էական տեղեկութիւններ պակասում են Ռւսուի ծթ դարու հայ դպրութեան և ալյ էլ ժանակու պատմութիւն ձեռնարկելը ալժմեան պարագաներում բաւական մեծ լաւակնութիւն է։ Մենք աւելի երախտապարտ կը լինէինք պ. հեղինակին, եթէ նա բաւականանար իւրեան աւելի ծանօթ տաճկահար գրականութեամբ և կամ մեր գրականութեան մի որոշ ճիւղով և զգուշանար գրական միջոկութեանց։

Ապա թէ ոչ մենք չենք համականում. ինչու այս պատմութիւնը կոչուած է ճնակու *) , քանի որ ոչ աղքիւնների և ոչ էլ նիւթի քննութիւն կալ ալսուելու և ուրիշների ասածը լաջորդաբար շարալարելով քննական պատմութիւն չի լինիւ, ուր օրինակի համար չատերից մէկը լիշենք։ Հեղինակը էջ 72 հ. Գարեգին Զարբհանալեանից առնելով պնդում է «Իողթան երգերու բանահիսութիւնը լար և նման է երալականին» բայց որ ալդ մասին Ստ. Մալխասեանը իւր ճիգն է թափել շաբաթաթերթ «Արձականքում», հալագէտ Ֆետաէրը Վեդակի շափերի հետ է համեմատում և հալկարան Մկրտիչ Պալիանը

*) Մի ժամանակ մնանում բառերն իրենց նշանակութիւնը կորցրել էին, ալսպէս կոչուած «անզուզական հրապարակագիրը» առիւծ և արծիւ բառերը շփոթում էր, սիալ տուբառառերի տարբերութիւնը չէր որոշում. ալժմ էլ նորա «թոռնիկները» հալերէն քիչ սովորել են, բայց դաղափար չւնին թէ որ և է գրքի խորագիրը բովանդակում է ամբողջ գրուածքը, ուստի «Հալկական տպագրութիւննը ոչ միայն հալոց, ալլ և ընդհանուր պատմութեան միջնագէպքեր է տալիս նրբ հարցնում ես պատճառը, քեզ ասում են թէ ժողովրդի համար է, կարգալով ալդ տեսակ գրքեր, մարդս ակամալ լիշում է բոշալի ուղւուկ։ Բոշաները տնէ տուն շրջելով ամեն տեսակ խէր ու ողորմութիւն ստացած կերակուրներն ածում են մի աման, ալնպէս որ ալգտեղ խառնում են շիլա, փլաւ, տօլմալ, շորուալ, քիւֆթա, և ալլն, ի հարկէ ալս էլ ժողովրդի համար է, բայց որ հայ ժողովլուրդը բոշալ չէ և հայն ալսօր աւելի համարամ կերակուրների ախորժակ ունի, ալդ մարդիկ չեն ուզում հասկանալ և իրաւացի նկատողութեանց պատասխանում են հարուանքներով։

Արարատ ամսագրում լունաց վիպական չափին է մօտեցնում, հեղինակը ոչ թէ միայն չէ քննել սոցա հաւանականութեան չափը, ալլ և ծանօթ չէ ալր լոդուածներին:

Հեղինակի քննադատական ոգու մի նմուշ էլ: Չորս էջ բունող հալ բանաստեղծների անթիւ և անհամար անուանց և երկասիրութեանց բազմութեան պատճառը արսպէս է բացատրում. «Ամէն Հալ ներդաշնակութեան համար ծնած է, ամէն Հալ աւիւն ունի, ամէն Հալու ականջին ընտանի հրեշտակ մը մեղեղիներ կը խօսոյ. երբէք բանաստեղծներու Գողթան գաւառը ալնքան ոգմորեալ երգիչներ ունեցած չէ, որովհետեւ ալնքան ալգիներու բերքէն արբշիո էին, իսկ նորերը սիրով են արբեցած: Եւ ինչ տաքով սիրու կը բարախէ ամէն հալու կուրծքին տակ, ինչ խանդ, ինչ երազուն ոգի. իր վեհ ճակտին ետև բոյն դրած է երեակալութիւն մը, որ կը փորձէ թե և թուիչ առնել ու շատ անդամ կը լաջողի բարձրերը սաւառնիլ» (էջ 57):

Սրջանիկ և ընտրեալ հալ աղդ... ԶԵ, թշուառ չէ...
ՍԿԱ.8

ԻՆՔՆԱՎԱՏԱՑԱՀ ՔՆՆԱԴԱՑԼ

« . . . Այն ժամանակուակ ուուսաց թերթերի մատենախօսական բաժինը լիշեցնում է հալոց ալֆմեան բնէի և + + + էրէի- իոնէրի բարբանջանքը և սորանց փողոցա- լին սրախօսութիւնները»:

ՎՈՒՄԱՐ 1899, Բ 333

Նոր շրջանի «Մուրճ»-ում պ. Տ. Յ. փորձ է անում ներկալացնել հալ հասարակութեան առաջ ուուսահակերիս գրականութեան անցեալ տարուալ «հաշուեկշիռը»... բայց Աստուած Շաշուեկշիռ համարի. *Mania grandiosa* կոչուած ախտը, անողորմաբար մտնելով պ. Տ. Յ.-ի ջանը, դարձրել է նորան մի արնպիսի ամբարտաւան մեծամտութիւն, որի առաջ քիչ է մնում ջարդ ու փշուր լինեն մեր գրական երկու գործիչների դափնիները. Օրինակ՝ Գամառ-Քաթիպալի բանաստեղծութիւ-